

փերուն կեր տվեալ ՁՈՒ հողի կորուսին: Իսկ  
 խոհեմ եւ իմաստուն այրն եւ քաջ հէթմանն  
 75 լուեալ զբազմութիւն զօրաց Տաճկաց՝ երկին-  
 չէր. եւ զրէր առ Չիկմունդ արքայն թէ վաղ  
 հասիր օգնութիւն մեզ, զի անթիւ եւ անհա-  
 մար է զօրքն այլազգեաց քան զաւագ եւ մեք  
 սակաւք. մինչ զի ի մեծ հոգսոյ անտի անկաւ  
 80 ի փորացաւութիւն, որ եւ մեռաւ. զորոյ Տէր  
 Աստուած հոգին լուսաւորէ: Եւ թագաւորն  
 ԳՃՈՒ հողով ճեպէր դայր եւ հասանէր առ որ-  
 դին ի բանակն:

Իսկ զօրքն երկուց կողմանց դիմամար-  
 85 տեալք մարտնչէին կոտորելով զմիմիանս: Եւ  
 այս եղեւ երկրորդ եւ երրորդ կոտորած երկու-  
 ցունց:

Ապա հրաման եհան Օսմանն բազմահոյլ  
 զօրօք հարկանել զբանակն Լէհու: Եւ սկսան  
 90 առաւօտէ մինչ իրիկուն կովել. եւ անկաւ  
 բազում զօր ի Լէհու եւ նոցա: Եւ յերիկունն  
 իրրեւ լուսացաւ՝ դարձեալ սկսան ճակատա-  
 մարտիլ: Եւ օրն այն էր մեծ եւ երեւելի. եւ  
 այնպէս մեծ եւ ահագին էր պատերազմն, զոր  
 95 ոչ կարեմ ընդ զբով արկանել. քանզի ի բազ-  
 մութենէ թօփից եւ թՓաքաց ծխոյն մթացաւ  
 աշխարհս. զի ոչ ոք կարէր ճանաչել, ո՞ր է  
 թշնամի կամ ո՞ր բարեկամք: Այլ եւ ահ եւ  
 զողունն կալաւ զամենեսեան. մինչ զի լքեալ  
 100 թողեալ եւ անյոյս մնացեալ եղեն զօրքն Լէ-

80 փորածաւութիւն: — 82 ճեպէտ: — 86 երկու-  
 ցունց: